

## Արձանագրություն թիվ 1

ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտի համայնքի ընդհանուր ժողովի նիստի

Գ. Եղեգնուտ կայացած՝ 07.2015 ժամը 14:00-ին

Նախագահությամբ՝ Ռ. Մարգարյանի

Քարտուղարությամբ՝ Ս. Ալեքսանյանի

Ընդհանուր ժողովին մասնակցում էին համայնքի բնակչության 63 անդամներ:

Ներկա էր Արմավիրի մարզպետարանի ֆինանսական բաժնի պետ՝ Հ. Հարությունյանը, ավագանու անդամներ, Եղեգնուտի համայնքի ղեկավարի աշխատակազմը.

Օրակարգում - Եղեգնուտ համայնքի ղեկավարի 2015թ. Առաջին կիսամյակում կատարած իր աշխատանքների մասին, մասնավորապես նշելով 2015թվականի առաջին կիսամյակում համայնքային բյուջեի արդյունքները, ինչպես մուտքային այնպես էլ ծախսային մասով:

Այսպես՝ 01.01.2015-30.06.2015թվականը ընկած ժամանակաշրջանում համայնքի բյուջե մուտքագրվել է 22389.1 հազար դրամ, որը կազմում է 103.9%, իսկ ծախսային մասը կազմում է 18275,0 հազ. դրամ, որը կազմում է բյուջեով նախատեսված ծախսերի 95%-ը:

Մուտքագրվել է՝

	Պլան	փաստացի	կատ.
	/ հազ. Դրամ/		
1. Հողի հարկ	2600,0	2556,7	98,3
2. Գույքահարկ իրավաբանական անձանցից	100,0	35,0	35,0
3. Գույքահարկ ֆիզիկական անձանցից	1600,0	2717,9	169,8
4. Հողի վարձավճար	1500,0	1434,9	95,6
5. Այլ ոչ հարկային եկամուտներ	180,0	93,6	52,0
6. Պետական բյուջեից ստացվել է դոտացիա	15530,0	15530,0	100,0
7. Տեղական տուրքեր	20,0	20,0	100,0
<b>ԸՆԴԱՄԵՆԸ՝</b>	<b>21530,0</b>	<b>22388,1</b>	<b>103,9</b>

Այսպիսով բյուջեի կատարողականը կազմում է 110,8%:

Վճարվել է.

/Հազար դրամ/

1. Աշխատավարձ	6742.8
2. Գրասենյակային և գրենական ապրանքներ	250.0
3. Սոց. օգն. անապ. Ընտանիքներին	870.0
4. Էլեկտրական էներգիաի վճարը	1144.9
5. Մշակութային ծառայություններ	100.0
6. Տեղեկատվական ծառայություն	169.6
7. Տրանսպորտային նյութեր	1944.0
8. Համակարգչային սպասարկում մասնագ. ծառայութ.	56.0
9. Ներքին գործողումներ	0.0
10. Վարչական սարքավորումներ	0.0
11. Կապի ծառայություններ	253.1
12. Նախագծային ծախսեր	400.0
13. Կենցաղային և հաս. Սննդի նյութեր	1000.0
14. Հատուկ նպատակային այլ նյութեր	250.0
15. Մասնագիտական ծառայություններ	185.0
16. Ապահովագրական ծառայություններ	32.0
17. Մանկապարտեզի գույքի ձեռք բերում	640.0
18. Սուբսիդիա մանկապարտեզին	4000.0
19. Տրանսպորտային սարքավորումներ	237.7
ԸՆԴԱՄԵՆԸ	18275.0

Համայնքի ղեկավարը նշեց, որ իրենց հարկային պարտավորություններում թերանում են հատկապես իրավաբանական անձինք:

Նշեց նաև համայնքում լուծվել են հետևյալ խնդիրները

1. Մանկապարտեզի համար գնվել է



2. 500.0 հազ. դրամի մանկական անկողին
  3. 600.0 հազ. դրամի մանկական մահճակալ
  4. Ցանցապատվել են մանկապարտեզի դուռը և լուսամուտները
  5. Մանկապարտեզի բնականոն աշխատանքների ապահովման համար տրվել է 4000.0 հազ. դրամի սուբսիդիա:
2. նախատեսվել է 2-րդ կիսամյակի սկզբում հինովին վերանորոգել մանկապարտեզի խոհանոցը, սանիտար-հիգիենիկ պահանջներին համապատասխան:

Ելնելով վերոգրյալից Եղեգնուտի համայնքի ընդհանուր ժողովը

Որոշում է՝

1. Համայնքի ղեկավարի 2015թվականի առաջին կիսամյակի կատարած աշխատանքները գնահատել բավարար:
5. Առաջարկել համայնքի ղեկավար Ռ. Մարգարյանին և աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ Վ. Միմոնյանին՝
  - 1) ապահովել իրավաբանական անձանց հարկային մուտքերը հողի հարկի, գույքահարկի և հողի վարձավճարների մասով, ըստ կիսամյակների 100%- ով:
  - 2) ֆիզիկական անձանցից գանձումները հողի հարկի վարձավճարների և գույքահարկի ըստ ապահովել 100%- ով:

Նախագահ՝



Ռ. Մարգարյան

Արձանագրող

Ս. Ալեքսանյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2015 թվականի հուլիսի 15-ին ժամը 14<sup>00</sup>-ին կայացած  
ՀՀ Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ընդհանուր ժողովի

Օրակարգ

Հայկաշեն համայնքի ղեկավարի 2015թ. առաջին կիսամյակի հաշվետվության  
ներկայացում:

*/զեկուցող Վ. Հովհաննիսյան/*

Մասնակցում էին ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և  
սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսական բաժնի պետ  
Հովհաննես Հարությունյանը, գյուղապետարանի աշխատակազմը, ավագանիները,  
դպրոցի տնօրենը, բուժ. կետի աշխատակիցները, համայնքի բնակիչները:

Լսեցին.- համայնքի ղեկավարի հաշվետվությունը:

Համայնքի բնակիչները դժգոհեցին ոռոգման ջրի անբավարարությունից:  
Համայնքի ղեկավարը նշեց, որ համայնքում փակ դրենաժային համակարգը չի  
գործում, որի պատճառով գրունտային ջրերը բարձրացել են, իսկ հողերը աղակալվում  
են, գյուղը գազաֆիկացված չէ, համայնքում կառուցվում է մանկապարտեզ:

Համայնքի ղեկավարը նշեց նաև հիմնահարցերը, որոնք լուծելու համար մեծ գումարներ  
են անհրաժեշտ:

Մտքերի փոխանակումից հետո ժողովն ավարտվեց:

Համայնքի ղեկավար՝

Արձանագրող՝



Վ. Հովհաննիսյան

Գ. Եղշատյան